

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 օգոստոսի 2017 թվականի թիվ 159-Ա


ՍԱՄՎԵԼ ՍԵՅՐԱՆԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ «ՀՀ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԽԱՇԹԱՌԱԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ և 16-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի «Խաշթառակի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2017թ. օգոստոսի 16-ի թիվ 6 նիստի արձանագրությունը, ՀՀ կրթության և գիտության նախարարության ներկայացուցչի եզրակացությունը և Ս.Սիմոնյանի դիմումը՝

ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Սամվել Սեյրանի Սիմոնյանին 2017 թվականի օգոստոսի 25-ից նշանակել «ՀՀ Տավուշի մարզի Խաշթառակի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում և կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Հ. ԱԲՈՎՅԱՆ

2017թ. 25 օգոստոսի
ք.Իջևան